

## ՀԱՅ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

### ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Հայերենի հնչյունային, հնչյոթային համակարգի ուսումնասիրությամբ զբաղվել են տարբեր լեզվաբաններ: Կատարվել են լաբորատոր մի շարք փորձարկումներ: Հիմնավոր քննվել են հատկապես ձայնավորների, բաղաձայնների, ձայնակապի, երկհնչյունների դիրքային արտասանության տարբերությունները և այլ հարցեր: Հայերենը հնչյունական համակարգի բնույթով համարվում է բարեհունչ լեզու: Այն ունի նաև երաժշտականության բարձր տվյալներ:

Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությունը նկարագրում և դասակարգում է հայոց լեզվի արդի փուլի հնչյունական համակարգը, բացահայտում լեզվում կատարվող հնչյունական գործընթացները, հնչյունների զանազան կարգի փոփոխությունները, նրանց առաջացման պատճառները, օրինաչափությունները<sup>1</sup>: Կարևորվում է տվյալ խոսքաշարում ձայնավոր և բաղաձայն հնչյունների կիրառման հաճախականությունը, ձայնավոր և բաղաձայն հնչյունների հարաբերակցությունը, առոգանությունը և այլն:

Սույն հոդվածում ներկայացված են հնչյունային ոճագիտության զարգացման հիմնախնդիրները: Ուսումնասիրվել են հայոց լեզվի հնչյունային ոճագիտության մասին գրված կարևոր աշխատանքները, տարբեր հետազոտություններում առկա դրույթները: Անդրադարձ է կատարվել հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչներին՝ բաղաձայնայնոյթ, առձայնայնոյթ, նմանաձայնայնություն: Մեթոդաբանական հիմք են դարձել եղած տեսական դրույթների համադրումը և վերլուծությունը: Գիտական գրականության նյութը ներկայացված է ժամանակագրական սկզբունքով:

**Բանալի բառեր** – *հնչյունային ոճագիտություն, բաղաձայնայնոյթ, առձայնայնոյթ, նմանաձայնայնություն, արտահայտչականություն, ոճական արժեք, պատկերավորման միջոց*

Հնչյունային ոճագիտությունը ուսումնասիրում է հնչյունական համակարգի արտահայտչական հնարավորությունները: Եթե ոճագիտության մնացած բաժինների (բառային, քերականական) վերաբերյալ հարուստ քննական նյութ կա, ապա հնչյունային ոճագիտության իբրև ոճագիտության առանձին բաժնի վերաբերյալ հետազոտությունները ավելի սահմանափակ են. հնչյունային ոճագիտությունը համակողմանիորեն չի բնութագրվել: Ոճագիտության այս բաժնին անդրադարձել են քչերը: Հետազոտված չեն հայոց լեզվի հնչյունային ոճագիտական

<sup>1</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017, էջ 23:

մտքի զարգացման ընթացքն ու հիմնախնդիրները: Հաշվի առնելով վերոգրյալը այս աշխատանքը համարում ենք այժմեական:

Նորագույն շրջանի ոճագիտական առաջին աշխատանքներում ներկայացվում էին զուտ լեզվական գիտելիքներ, ինչը, կարծում ենք, սկզբնական շրջանի համար բնական էր և պատճառաբանված, բայց, իհարկե, բավարար չէր ոճագիտական մտքի զարգացման համար<sup>2</sup>: Այսպես, Մ. Ասատրյանը, Ս. Աբրահամյանը իրենց ոճագիտական աշխատանքներում անդրադարձել են արտասանական և հնչերանգային բնույթի սխալներին, գրական արտասանական աղավաղումներին, ուղղախոսական անճշտություններին<sup>3</sup>: Հնչյունի ոճական արժեքի վերաբերյալ կարևոր դրույթներ կան ոչ միայն տեսական աշխատանքներում, այլև առանձին հեղինակներին նվիրված գործնական ուսումնասիրություններում<sup>4</sup>: Դրանք, սակայն, մեր կարծիքով, առավելապես առնչվում են հնչյունաբանությանը և ոչ թե հնչյունային ոճագիտությանը:

Չուտ լեզվական մակարդակի սահմանումներին հաջորդեցին ոճաբանական վերլուծություններ, մշակվեց գիտական տերմինաբանություն ոլորտի վերաբերյալ:

Հնչյունային ոճագիտության վերաբերյալ աշխատանքներից առանձնանում է Ֆ. Խլղաթյանի «Հնչյունական ոճաբանություն»<sup>5</sup> ծավալուն հոդվածը: Հեղինակը համակողմանիորեն անդրադարձել է լեզվի արտահայտչական, հուզական հնարավորություններին, դրանց ներգործությանը: Ի տարբերություն շատ լեզվաբանների, որոնք հնչյունային ոճագիտության մասին խոսելիս հիմնականում շեշտը դնում էին ուղղախոսական համակարգի, արտասանական նորմերի, դրանց խախտումների վրա և հնչյունական միջոցների ոճական կիրառությունները կարծես թողնում էին ստվերում՝ Ֆ. Խլղաթյանը ոչ միայն խորությամբ ուսումնասիրել է հնչյունական-արտասանական այդ երևույթների ոճական հնարավորությունները, այլև, իբրև առաջին փորձ, առանձնացրել է որոշ խմբեր, կատարել դասակարգումներ, բաժանումներ: Ըստ լեզվաբանի՝ հնչյունային ոճագիտության հնարավորությունները բաժանվում են երկու խմբի. առաջինում միավորվում են այն երևույթները, որոնք նպաստում են հեղինակային միտումի համաձայն խոսքի հնչյունական կողմի կազմակերպմանը և դրսևորվում են հնչյունների ու հնչյունախմ-

<sup>2</sup> Նորագույն շրջան ասելով նկատի ունենք 1950-ական թթ. մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Ի դեպ, հենց 1950-ական թթ.-ից է սկսել դասավանդվել «Հայոց լեզվի ոճաբանություն» դասընթացը հայաստանյան բուհերում:

<sup>3</sup> Առավել մանրամասն տե՛ս Մ. Ասատրյան, Խոսքի կուլտուրայի մասին, Եր., 1958, ինչպես նաև՝ Ս. Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացում, Եր., 1973:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Աբրամյան, Հնչյունաբանության և հնչյունախոսության մի քանի հարցերը ռուս և հայ լեզվաբանության մեջ, «Լեզվի և ոճի հարցեր». հոդվածների ժողովածու, 1960, I, էջ 315-336: Ռ. Թոխմախյան, Ժամանակակից հայերենի բառային շեշտի բնույթը, «Լեզվի և ոճի հարցեր». հոդվածների ժողովածու, 1975, III, էջ 123-207 և այլն:

<sup>5</sup> Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Հնչյունական ոճաբանություն, «Լեզվի և ոճի հարցեր». հոդվածների ժողովածու (6), Եր., 1982:

բերի տարբեր գուգորդումներից ծնվող զանազան «էֆեկտների» ձևով, իսկ երկրորդ խումբը կազմում են խոսքի արտաբերական կողմին (արտասանությանը) առնչվող երևույթները<sup>6</sup>: Լեզվաբանը առանձնացրել է **բարեհնչությունը**, որը անվանել է նաև **գեղահնչաբանություն** (инструментовка), **հնչահանգությունը** (звукочисль), և նշել, որ հայոց լեզվի հնարավորությունները այս ասպարեզում բավական մեծ են: Հողվածագիրը նկարագրել է հնչունական կրկնությունները: Ըստ նրա՝ դրանք բանաստեղծության մեջ դրսևորվում են բաղաձայնային, առձայնային, հանգի ձևով: Նա քննադատաբար է անդրադարձել հնչունային ոճագիտությանը վերաբերող տարբեր հարցերի: Վստահ կարող ենք ասել, որ մինչ օրս Ֆ. Խլղաթյանի ծավալուն հողվածը հնչունային ոճագիտության ասպարեզում չի կորցրել իր արդիականությունը և տեսական հարուստ աղբյուր է ոճագիտական ուսումնասիրությունների համար:

Հայ ոճագիտական մտքի պատմության մեջ անդրադարձ է կատարվել հնչունային ոճագիտության հետևյալ հիմնական բաղադրիչներիին՝ *բաղաձայնայնոյթ, առձայնայնոյթ, նմանաձայնություն, հնչերանգ, ելևէջում, դադար, ռիթմ, հանգ, տեմպ, շեշտ*: Ըստ մեր ձեռքի տակ եղած տեսական աղբյուրների՝ ներկայացնենք լեզվաբանների ուշարժան դիտարկումները լեզվական վերոնշյալ իրողություններից մի քանիսի վերաբերյալ: Գիտական գրականության նյութը ներկայացված է ժամանակագրական սկզբունքով:

**Բաղաձայնայնոյթ**: Ըստ «Ոճաբանական տերմինների բառարանի»՝ բաղաձայնայնոյթը նույն կամ նույնորակ բաղաձայն հնչունների կուտակումն է խոսքի բարեհնչության, պատկերավորության, ռիթմիկ հնչեղության ու մեղեդայնության, ինչպես նաև բնական ինչ-ինչ երևույթների լսողական խաբկանք առաջացնելու նպատակով<sup>7</sup>: Կարևորվում է նման հնչունների ճիշտ ընտրությունը՝ խուլ կամ ձայնեղ, շրթնային կամ ռնգային, նույն շարքի կամ հարևան շարքերի բաղաձայնների կրկնությունը և այլն:

Հնչունային ոճագիտության այս բաղադրիչը, ինչպես սկզբնական շրջանում նկատել են լեզվաբանները, առավել բնորոշ է գեղարվեստական խոսքին, մասնավորաբար՝ չափածոյին: Մովորաբար դիտարկվում է բանաստեղծական բնագիրը՝ նկատի ունենալով հնչունական հատկանիշներով իրար մոտ հնչունները: Մ. Պետրոսյանը, անդրադառնալով հայ հին մատենագրության մեջ հնչունական այս միջոցների ոճական կիրառություններին, բերում է բնագրային օրինակներ և վերլուծում դրանք: Նա առաջիններից է, որ փորձում է ձայն/հնչուն-բովանդակություն առնչություններում քննարկել հարցը: «Հնչունական միջոցները ինքնանպատակ չեն,- գրում է նա,- դրանք ավել կամ պակաս չափով առնչվում են ասույթի բովանդակության հետ, իսկ առանձին

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 84:

<sup>7</sup> Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան, Եր., 1970, էջ 16:

դեպքերում արտաքին հնչյունական տպավորությունն այնպիսի պատ-  
րանք է ստեղծում, որ թվում է, թե տվյալ պահին առկա է այն առարկան  
կամ երևույթը, որի մասին խոսվում է (Ճչ-կանչ-խանչ ձևույթներում  
նույն կամ նմանահնչյուն բաղաձայնների հաճախականությունը հի-  
շեցնում է խոզի խառաչը, բուխ-բխ կապակցությունները՝ ակունքից  
բխող ջրի ձայնը)»<sup>8</sup>: Հեղինակն ընդգծում է, որ դեռևս անտիկ աշխարհի  
ճարտասանները ոճի կարևոր հատկանիշների շարքին էին դասում  
բաղաձայն և ձայնավոր հնչյունների զանազան զուգորդումները, ո-  
րոնք խոսքը դարձնում են կշռույթավոր, բարեհնչյուն, արտահայտում  
են զգացմունքային և իմաստային հարուստ նրբերանգներ:

Հետագա ուսումնասիրողները ավելի խորացրին հարցի մասին ե-  
ղած ուշագրավ դիտարկումները:

Էդ. Ջրբաշյանը իրավացիորեն նշում է, որ բաղաձայնույթը չպետք  
է դառնա ինքնանպատակ լեզվական խաղերի միջոց, ինչպես երբեմն  
վարվել են ձևապաշտական պոեզիայի ներկայացուցիչները<sup>9</sup>: Այն պի-  
տի բխի ստեղծագործության բովանդակությունից նպատակ ունենա-  
լով ստեղծելու որևէ տրամադրություն, երաժշտականություն: Հայ գրա-  
կանությունը, ըստ հետազոտողի, լի է բաղաձայնույթի դրսևորումնե-  
րով. որպես բաղաձայնույթի առաջին կատարյալ նմուշներ՝ մատնանշ-  
վում են Գր. Նարեկացու, Ն. Շնորհալու գործերը: Բաղաձայնույթի հնա-  
գույն դրսևորումներից է համարվում բոլորիս քաջածանոթ Վահագնի  
ծնունդը պատկերող երգը (*«Երկնէր երկին, // Երկնէր երկիր, // Երկնէր  
եւ ծովն ծիրանի. // Երկն ի ծովուն ունէր // Եւ զկարմրիկն եղեգնիկ...»*):  
Բաղաձայնույթի կիրարկման օրինակներ են առկա հին և միջնադար-  
յան, նոր, նորագույն շրջանի հայ գրականության մեջ: Հնչյունային մի-  
ջոցների նպատակային կրկնության դիմել են ինչպես արևելահայ  
(Թումանյան, Տերյան, Շիրազ, Մահյան և այլք), այնպես էլ արևմտահայ  
հեղինակներ (Վարուժան, Մեծարենց և այլք): Օր. Վարուժանի «Ցորյա-  
նի ծովեր» բանաստեղծությունում տեսնում ենք **h** հազագային հնչյունի  
կրկնությամբ, բանաստեղծի երևակայությամբ ստեղծված կենդանի հո-  
վերի պատկերը. *«Հովէ ր կանցնին.- // Ու ցորյաններս հուշիկ հուշիկ  
կարթննան. // Իրենց խորքեն կը հոսի դող մանսահման»*: **Օ** հնչյունի  
կրկնության բնութագրական օրինակ բերենք Մահյանի պոեզիայից.  
*«Օտներից մանկություն է ծորում // Օերպերից՝ ծաղիկ ու ծիածան: //  
Օալվեձալ լեռները ծրարել, // Օալվել է երկինքը կապուտակ...»*: Այլ հե-  
տազոտողներ հանգամանորեն անդրադարձել են բաղաձայնույթի ո-  
ճական այսպիսի դրսևորումներին, արևմտահայ կամ արևելահայ այս  
կամ այն հեղինակի առիթով փորձել են վեր հանել գեղարվեստական  
խոսքի բովանդակային-գաղափարական առանձնահատկությունները՝  
պայմանավորված հնչյունային-ոճական այդ հնարանքով:

<sup>8</sup> Մ. Պետրոսյան, Լեզվի և ոճի հարցեր, Եր., 1980, էջ 53:

<sup>9</sup> Տե՛ս էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Եր., 1980, էջ 43:

Ս. Մելքոնյանը հավելում է, որ բաղաձայնության արտահայտչական արժեքն ավելի է մեծանում, երբ համապատասխանում է խոսքի բովանդակությանը<sup>10</sup>: Նա բերում է օրինակներ, որոնցում կրկնվող բաղաձայնը լինում է տարբեր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում: Այսպես, օրինակ, Չարենցի հետևյալ տողերում առկա է *հ, ղ* հնչյունների կուտակում. «Հրոտ, հրաշեկ ոսկին արևի՝ // Հրդեհված հոգու հովն է երևի... // Հուր հովը հոգու՝ հրդեհված հիմա - // Լեռնային վանքի խաչերի վրա»: Ոճական այսպիսի կիրառությունները ամփոփ մեկնաբանված են լեզվաբանների կողմից:

Ս. Մարությանը որպես *բաղաձայնության* համարժեք տերմին օգտագործում է *բաղաձայների հանգիստություն* արտահայտությունը<sup>11</sup>: Սակայն այդ տերմինը լայն գործածություն, տարածում չունեցավ: Լեզվաբանը հարցի ուսումնասիրության ոլորտում գրեթե չի հավելում նոր բան:

Այլ ուսումնասիրողներ փորձել են տեսականորեն համակարգել նյութը և որոշակիորեն դասակարգել այն: Գ. Ջահուկյանը, Ֆ. Խլղաթյանը բաղաձայնության գործածության դեպքերը բաժանել են երկու խմբի՝ ա) բաղաձայնության օգտագործվում է բնության երևույթների ձայնական տպավորություններ ստեղծելու նպատակով, բ) բաղաձայնների կրկնությունը սոսկ հնչյունախաղ է և միայն ուժեղացնում է բանաստեղծության երաժշտականությունը<sup>12</sup>: Վերոբերյալ բաժանումը ներկայացված է նաև Լ. Եզեկյանի «Ոճագիտություն»<sup>13</sup> ձեռնարկում, բայց որևէ լրացուցիչ մեկնաբանություն լեզվաբանը չի հավելում: Հետևապես դժվար է պնդել՝ արդյո՞ք ընդունելի է այս դասակարգումը հեղինակի համար:

Ժամանակակից լեզվաբանների կարծիքով, սերտ առնչության մեջ լինելով բառընտրության և խոսքի բովանդակության ինչ-ինչ կողմերի հետ՝ բաղաձայնությունը ոչ միայն ստեղծում է բազմաձայնություն, այլև նպաստում է ձայնապատկերի կառուցմանը, ընթերցողի ուշադրությունը հոգեբանորեն կենտրոնացնում է այս կամ այն մտքի կամ գեղարվեստական պատկերի վրա<sup>14</sup>: Այս միտքը հաստատելու համար բերվում են համապատասխան օրինակներ և վերլուծվում: Օր.

Աջնան մշուշում շշուկ ու շրշուն...

... Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում

Եվ շշնջում ես և անուշ շրշում... (Վ. Տերյան)

Այստեղ շ շփական հնչյունի առատությունը, ըստ ուսումնասիրողների, և՛ բազմաձայնության, և՛ պատկերի ստեղծման խթան է: Նկատելի է նաև, որ «Շշուկ և շրշուն» բանաստեղծությունում գուգակցելով առձայնությունը և բաղաձայնությունը՝ ստեղծվել է աշնանային տրամադ-

<sup>10</sup> Տե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 65:

<sup>11</sup> Տե՛ս Ս. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000, էջ 189:

<sup>12</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2007, էջ 82:

<sup>13</sup> Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2006:

<sup>14</sup> Տե՛ս Հ. Ջաքարյան, Յու. Ավետիսյան, Ոճագիտություն: Տեքստագիտություն: Հայոց լեզվի պատմություն, Եր., 2018, էջ 17:

րություն: Միևնույն խոսքաշարում սրանց համակցումը բնականոն է:

Այսպիսով՝ ընդհանուր նկարագրական դիտարկումներից հարցի ուսումնասիրությունը հանգում է համեմատաբար խորը և փաստարկված վերլուծության: Այն նույն ճանապարհն է անցել նաև օտար լեզուներում: Բաղաձայնային՝ որպես հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչի ոճական-արտահայտչական յուրահատկություններին ավելի վաղ են անդրադարձել օտար, մասնավորաբար ռուս և անգլիացի լեզվաբանները<sup>15</sup>: Բաղաձայնային լայնորեն կիրառվել է անգլիական գրականության զարգացման տարբեր փուլերում՝ թե՛ արձակում (օր.՝ *And then came Black Leclure, to lay his heavy hand on the bit of pulsating puppy life, to press and prod and mould till it became a big bristling beast, acute in knavery, overspilling with hate, sinister, malignant, diabolic.* (Ձեկ Լոնդոն)), թե՛ չափածոյում (օր.՝ *Wind whines and whines the shingle, // The crazy pierstakes groan; // A senile sea numbers each single // Slimesilvered stone* (Ձեյս Ջոյս)): Բաղաձայնային կիրարկման յուրօրինակ ձևեր տեսնում ենք դարձվածքային արտահայտություններում (օր.՝ *blind as a bat, tit for tat, last but not the least, as good as gold pretty as a picture, dead as a doornail, bag and baggage, bread and butter, between the devil and the deep blue sea*), ստեղծագործությունների վերնագրերում (օր.՝ *"Sense & Sensibility", "Pride & Prejudice"*), պոեզիայում (օր.՝ *I love your hills and I love your dales, I love your flocks a-bleating*) և այլուր: Դրանք հանգամանորեն ուսումնասիրվել են մասնագետների կողմից<sup>16</sup>:

**Առձայնային:** Առձայնային բանաստեղծականությունն ու մեղեդայնությունն ստեղծելու նպատակով նույն կամ նույնորակ ձայնավորների կուտակումն է<sup>17</sup>: Ի տարբերություն բաղաձայնային՝ առձայնային գործածականությամբ աչքի չի ընկնում: Ի սկզբանե լեզվաբանները նկատել են, որ առձայնային հաճախ զուգակցվում է բաղաձայնային հետ: Լեզվաբանները համեմատաբար քիչ են անդրադարձել առձայնային:

Ն. Վիրաբյանը, Լ. Մարգարյանը առձայնային մասին խոսելիս բերում են հետևյալ օրինակը (նույնօրինակ վերլուծություն առկա է մի շարք լեզվաբանների մոտ). **ու** ձայնավորի բազմակի կրկնությունը **վ** և **շ** բաղաձայնների հետ ստեղծում է հերոսների ողբերգական ճակատագրերը սզացող միալար ձայնի տպավորություն Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքում, որը կրկնվում է և վերջին՝ 6-րդ երգում<sup>18</sup>:

— **Վուշ-վո** ւշ, **Անո** ւշ, **վուշ-վո** ւշ, **քուրի** կ,  
**Վո** ւշ **քու** սերին, **քու** յարին...  
**Վուշ-վո** ւշ, **Մարո** , **վուշ-վո** ւշ, **իզի** թ,  
**Վո** ւշ **քու** սիրած սարերին...

<sup>15</sup> Առավել մանրամասն տե՛ս **L. Galperin**, Stylistics, M., 1977, էջ 126:

<sup>16</sup> Առավել մանրամասն տե՛ս **P. Simpson**, Stylistics, UK, 2004, **V. Zhukovska**, English stylistics: fundamentals of theory and practice, Ukraine, 2010, **E. Sachkova**, Lectures on English Stylistics, M., 2012:

<sup>17</sup> Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Ոճաբանական տերմինների բառարան, էջ 11:

<sup>18</sup> Տե՛ս **Ն. Վիրաբյան, Լ. Մարգարյան**, Հայոց լեզու: Ոճաբանություն, Եր., 2007, էջ 6:

Քիչ գործածվելու վերաբերյալ շատ հիմնավոր է լեզվաբանների բացատրությունը: Ըստ Գ. Ջահուկյանի, Ֆ. Խլղաթյանի՝ քիչ գործածության հիմնական պատճառը առձայնության և պատկերվող երևույթի իմաստային-հուզական կապի թուլությունն է. այն չի կարող նույնպիսի հուզական լիցք կրել, ինչպես բաղաձայնությո՞ւրը, և օգտագործվում է հիմնականում բարեհնչություն ստեղծելու նպատակով<sup>19</sup>:

Առձայնության օրինակներ կան Շնորհալու, Նարեկացու, Մեծարենցի, Տերյանի, Իսահակյանի, Վարուժանի, Չարենցի, Շիրազի և ուրիշների գործերում: Բայց նայնպես, դժվար է միանշանակ պնդել, որ ձայնավորների բազմակի գործածությունը լրացուցիչ արտահայտչականություն է հաղորդում տեքստին: Այսպես, օրինակ՝

*Գոհար վարդն վառ առեալ  
ի վեհից վարսիցն արփենից...*

(Նարեկացի)

*Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.  
Հեռացան ամենն ալ՝ ծրփանուտ Երազիս արփունքեն...*

(Մեծարենց)

*Երազիս տեսա՝ օրո՛ր ու շորո՛ր  
Քարվանն էր անցնում զնգալով անո՛ւշ:  
Սարերի փեշով ոլո՛ր ու մոլո՛ր  
Քարվանն էր անցնում զնգալով անո՛ւշ:*

(Իսահակյան)

Կա ձայնային հարստություն, կա որոշակի ռիթմական բազմաձայնություն, և դա խոսքին արտահայտչականություն է հաղորդում միմիայն բովանդակության հետ շատ որոշակի զուգահեռությամբ: Եվ ուսումնասիրողի խնդիրն է նկատել ու վեր հանել այդ կապն ու առնչությունը:

Թ. Շահվերդյանը առձայնությո՞ւր որակում է որպես հնչյունային գործիքավորման հիմնական հնար: Լեզվաբանը իրավացիորեն նշում է, որ հայերենում բաղաձայնների համեմատությամբ ձայնավորները, քանակապես քիչ լինելով, ավելի հաճախ են գործածվում (հատկապես ա ձայնավորը), և առանձին դեպքերում նրանց կրկնությունը այս կամ այն համատեքստում ոճական որևէ գործառույթ չի կատարում, այլ պարզապես պայմանավորված է հայերենի հնչյունական առանձնահատկություններով<sup>20</sup>:

Հետազոտողները փաստում են, որ մեր լեզվում առձայնության նկարագրության ճշգրիտ չափանիշներ չկան, քանի որ առձայնությո՞ւր դժվար ճանաչելի է, դրսևորմամբ՝ խնդրահարույց:

Օտար գրականության մեջ նույնպիսի սկզբունքներով է կատարվում քննությունը: Բերենք առձայնության բնութագրական օրինակներ անգլիական բանաստեղծական խոսքից, որոնցում նկատում ենք [e], [ei] կրկնություն: Այսպես՝

<sup>19</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 83:

<sup>20</sup> Տե՛ս Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 52-53:

Tenderly bury the fair young dead. [e]  
 Tell this soul with sorrow laden if within the distant  
 A idenn,  
 It shall clasp a sainted maiden whom the angels named  
 Lenore-  
 Clasp a rare and radiant maiden, whom the angels named  
 Lenore? [ei]

Այսպիսով՝ ձայնական հարստությունը հայերենին բնորոշ առանձնահատկություն է: Եվ առձայնությո՞ւր մեր գեղարվեստական չափաճոյուն ընդգծված ու շատ գործածվող արտահայտչական միջոցներից չէ: Դա է պատճառ նաև, որ ոճագիտական գրականության մեջ հաճախակի անդրադարձ չի եղել, և բավարար չափով չի ուսումնասիրվել հարցը:

**Նմանաձայնություն:** Նմանաձայնությունը հնչյունական հնարանք է, որը նպատակ ունի որոշ հնչյունների կրկնության, կուտակման միջոցով «լսելի դարձնել» որևէ գործողություն, շարժում, բնության որևէ տեսարան<sup>21</sup>: Հնչյունների կրկնության այս տարատեսակը հնարավորություն է ընձեռում խոսքը տպավորիչ ու արտահայտիչ դարձնելու, այն ունի ոճական որոշակի դեր, գործողությանը հաղորդում է երանգ, հուզականություն:

Պ. Պողոսյանը մեզանում թերևս առաջինն է ներկայացրել խոսքում բնաձայնությունների ոճական գործածությունը: Ըստ նրա՝ բնաձայնությունները բնույթով տարբեր են դատողական խոսքի մասերից, դրանց սպասարկող խոսքի մասերից, ձայնարկություններից ու կամային բառերից<sup>22</sup>: Մրանք ոճագետը անվանում է ոչ լիարժեք բառեր: Խոսքում բնաձայնությունները (*վրշշ, բրխկ, չրխկ, դրռռ, հաֆ, միառու և այլն*) դիտարկվում են նախադասության կապակցությունից դուրս ձևեր: Դրանք հանդես են գալիս, այսպես ասած, խորհրդանշային (սիմվոլիկ) արժեքով:

Չայ ոճագիտական տերմինաբանության մեջ առկա են թե՛ **նմանաձայնություն**, թե՛ **բնաձայնություն** անվանումները: Մրանք զուգընթաց, համաժամանակ գործածվել են համարվելով հանձնարարելի տարբերակներ: Ինչպես նկատեցինք, Պ. Պողոսյանը գործածում է բնաձայնություն տերմինը, իսկ, օրինակ, Ա. Մարությանը խրախուսելի է համարում *նմանաձայնական* տերմինի օգտագործումը *բնաձայնական*-ի փոխարեն՝ հետևելով Հ. Նազարեթյանի դիտարկմանը, այն է՝ «ոչ մի նմանաձայնական բառ բնական ձայնի ճիշտ և ճիշտ նույնական վերարտադրությունը նույնաձայնություն չէ, այլ նրա մոտավոր հնչյունական նմանակումն է»<sup>23</sup>:

Լ. Եգեկյանի դիտարկմամբ՝ այս դեպքում կրկնվում է ոչ թե մեկ հնչյունը, այլ մի քանի հնչյուններ միաժամանակ կամ բառի մի մասը, ինչպես *վազվզել, ծլծլալ, կոխկոխել* և այլն: Նա բերում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի Ջանգու գետի նկարագրությունը, ինչը բնաձայնական բառերի գործածության հաջող օրինակ է, այսպես՝ «Հրով ու

<sup>21</sup> Տե՛ս **Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան**, նշվ. աշխ., էջ 220-221:

<sup>22</sup> Տե՛ս **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, I, Եր., 1990, էջ 333:

<sup>23</sup> **Ա. Մարության**, նշվ. աշխ., էջ 187:



սրով, բոցով, բրով, փոնչալով, մոնչալով, խոնչալով, քարի, քարափի գլուխ վեր հատելով, իր փորը խցկելով... ճչալով, ճոնչալով, թնդալով, դողդալով, սառցահատ գետինը պոկելով, պոճոկելով, քրքրելով, բամբաչելով, սրթսրթացնելով, վրթվրթացնելով, կրակված աչքերը արնով լիքը, աստամները դրճտացնելով, դնգոնգացնելով...», որ չի գալիս ամեհի Ջանգին, որ Ձորագեղ մտնում...»<sup>24</sup>: Լեզվաբանի վերլուծությունը էապես կշահեր այն դեպքում, եթե պատմական ժամանակաշրջանը նկատի ունենալով՝ բնաձայնական բառերի գործածությունը կապեր առհասարակ «Վերք Հայաստանի» վեպի բովանդակության հետ:

Թ. Շահվերդյանի այն կարծիքը, որ հայ գեղարվեստական գրականության մեջ այս արտահայտչամիջոցը լայն տարածում չի գտել և հանդիպում է երբեմն, իհարկե ունի իր բացատրությունը<sup>25</sup>: Լեզվաբանը, կարծում ենք, սա հայտնում է՝ նկատի ունենալով առհասարակ լեզվի մեջ նմանաձայնության գործածությունը: Նմանաձայնությունը ակտիվ գործածություն ունի գրականության որոշակի ժանրերում, սեռերում, մասնավորաբար՝ մանկական բանաստեղծություններում, ինչպես

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| Ծիտը ծառին ծլվում է.     | - Ծուղրուղո լ.             |
| - Ծի վ, ծի վ, ծի վ.      | Աքլորը զիլ կանչեց թառին.   |
| Բազեն գլխին պտտվում է.   | Ճի կ-ճի կ, ճի կ-ճի կ,      |
| - Վո ւյ, վո ւյ, վո ւյ... | Զարթնեց մթնում ծիտը ծառին: |

(Աղայան)

(Թումանյան)

Վերոբերյալ բանաստեղծությունները ընթերցվում են հաճույքով. հեղինակները դիմել են նմանաձայնությունների ճիշտ, տեղին գործածության: Կենդանիների, թռչունների մասին գրված բանաստեղծությունների լեզվին հատուկ է նմանաձայնական բառերի հաճախակի գործածությունը:

Անգլերենում տարբերակվում են նմանաձայնության բառային (lexical) և ոչ բառային (nonlexical) ձևեր<sup>26</sup>: Բառային ձևերը լեզվում ճանաչելի ձևերն են, ինչպես՝ *դղրդոց, թրմփոց, ճաքճոց, բզզոց, տզզոց* և այլն, իսկ ոչ բառային ձևերը հնչյունական այն խմբերն են, որոնք ընդօրինակում են ձայնը առանց որևէ լեզվական առնչության, ինչպես գործարկվող մեքենայի ձայնը՝ *vroom vroom* կամ *brrrrm brrrrm* և այլն: Առանձնացվում են նաև տեսողական և լսողական ձևեր: Օր.՝ *miaow, mrruh, prrrup, mrow, yowl, mrrrrr* համապատասխան տարբերակներից կարելի է մոտավոր պատկերացում կազմել կատվի, նրա վարքի մասին: Մա դիտարկվում է որպես տեսողական ձև: Ոգևորված ընթերցելիս հաճախ մենք ընդօրինակում ենք տեքստում մարդու կամ կենդանու ձայնը: Մա արդեն լսողական ձևն է. տարածված են հատկապես *meow*-ը կամ *wow*-ը: Ինչպես նկատում ենք, հայ լեզվաբանության մեջ նմանօրինակ դասակարգումներ չկան:

<sup>24</sup> Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 117:

<sup>25</sup> Տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 53:

<sup>26</sup> Տե՛ս P. Simpson, *Stylistics*, 2004, էջ 67:

Այսպիսով, հնչյունների արտահայտչական հնարավորությունները սահմանափակ են, այդուհանդերձ դրանք անտեսել չի կարելի: Լեզվաբանները որպես խոսքի հնչյունական համակարգի կառուցման անհատական բաղադրիչներ առանձնացնում են բաղաձայնությո՞ւր, առձայնությո՞ւր, նմանաձայնությունը՝ կարևորելով նաև արտասանական ավելի փոքր տարրերը: Հնչյունային ոճագիտության բաղադրիչների (բաղաձայնությո՞ւր, առձայնությո՞ւր, նմանաձայնություն) կիրառումը ինքնանպատակ չէ, այլ՝ բովանդակության պահանջ: Հնչյունների գործածությունը իմաստային տարբեր երանգներ կարող է հաղորդել խոսքին: Այսօր հնչյունային ոճագիտության առանձին միավորներ պահանջում են խորը քննություն, ինչպես նաև հանրայնացում:

**ВАЛЬТЕР БЕРБЕРЯН – Из истории армянской фонетической стилистики.** – Разные лингвисты изучали фонологическую систему армянского языка, выполняя ряд лабораторных исследований. Армянский язык гармоничен по своему фонетическому строю. Он также имеет высокие данные о музыкальности.

Фонология современного армянского языка описывает и классифицирует фонетический строй современного этапа армянского языка, выявляет фонетические процессы, происходящие в языке, изменения разного порядка звуков, причины их возникновения, закономерности.

В статье представлены проблемы развития фонетической стилистики. Были изучены работы, написанные о фонетической стилистике армянского языка, положения в различных исследованиях. Были затронуты основные компоненты фонетической стилистики: аллитерация, ассонанс, звукоподражательное слово. Методологической основой является сочетание и анализ существующих теоретических положений.

**Ключевые слова:** *фонетическая стилистика, аллитерация, ассонанс, звукоподражательное слово, выразительность, стилистическое значение, образ*

**VALTER BERBERYAN – From the History of Armenian Phonetic Stylistics.** – Different linguists have studied phonetic system of Armenian, performing many laboratory tests. Armenian is a harmonious language by the nature of the phonetic system. It has high musicality data as well.

The phonology of the modern Armenian language describes and classifies the phonetic system of the modern stage of the Armenian language, reveals the phonetic processes taking place in the language, changes in different order of sounds, reasons for their occurrence, as well as patterns.

The article presents the problems of phonetic stylistics development. We have studied the works written about phonetic stylistics of the Armenian language, the provisions in various researches. Reference has been made to the main components of phonetic stylistics: alliteration, assonance, onomatopoeic word. The methodological basis is the combination and analysis of existing theoretical provisions.

**Key words:** *phonetic stylistics, alliteration, assonance, onomatopoeic word, expressiveness, stylistic value, image*